

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 7-ի նիստի N 38
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ
ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգը մշակվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 122-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 65-րդ կետով նախատեսված միջոցառման, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի 5-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման շրջանակներում:

3. Հայեցակարգի մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն):

4. Հայեցակարգը հանդիսանում է մարզի տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների համար որպես ուղեցույց՝ Ռազմավարության պահանջներին համապատասխան, եվրոպական ստանդարտներով սահմանված կոշտ կենցաղային թափոնների կառավարման ժամանակակից համակարգ ներդնելու, ըստ այդմ, արդյունավետ աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնելու, համակարգի հետագա սպասարկման գործընթացների կառավարման, ԵՄ չափորոշիչ-

ներին համապատասխանող աղբավայրի կառուցման, աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտների տեխնիկատնտեսական և իրավական կարգավորումներին վերաբերող հարցերի լուծման համար:

5. Հայեցակարգում շարադրվում են ՀՀ Շիրակի մարզի համար կոշտ կենցաղային թափոնների կառավարման քաղաքականության առաջնահերթություններն ու հիմնախնդիրները, ներկա վիճակը, ինչպես նաև առկա խնդիրների լուծման ուղիները և մեխանիզմները:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

6. ՀՀ Շիրակի մարզի համար կոշտ կենցաղային թափոնների կառավարման առանձին հայեցակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը Ռազմավարության պահանջների հետ համապատասխանացմամբ, հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական, բնակլիմայական և այլ առանձնահատկությունները:

7. Հայեցակարգը խարսխված է Ռազմավարությամբ ամրագրված հետևյալ սկզբունքների վրա.

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցում և չեզոքացում,

2) բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովում,

3) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացում,

4) համապատասխան պահանջարկի դեպքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, կրկնակի կամ վերաօգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծում,

5) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացում՝ «խելացի» համակարգի ներդրում»,

6) ոլորտում միջհամայնքային համագործակցություն

7) տեխնիկա-տնտեսական հիմնավորված ծախսաձածկող և բնակչության համար մատչելի վարձավճարներ:

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման (այսուհետ նաև ԿԿԹԿ) համակարգի զարգացման հայեցակարգի նպատակն է ՀՀ Շիրակի մարզի ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշները բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահապանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և կազմակերպություններին (այսուհետ միասին՝ բաժանորդներ): ԿԿԹԿ Շիրակի մարզի

տարածաշրջանային ենթահամակարգը պետք է լինի ԿԿԹԿ հանրապետական համակարգի կազմի մեջ, բավարարի նույն չափորոշիչներին ու սկզբունքներին, սակայն գործի անկախ: Ենթահամակարգի ինտեգրվածությունը ենթադրում է թափոնների կառավարման (հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման/հեռացման, իսկ հետագայում նաև վերանշակման) տեխնոլոգիաների և կառավարման համակարգի համադրություն, որը գործելու է ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական կայուն հենքի վրա:

IV. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9. Եվրոպական չափանիշներին համապատասխան կոշտ կենցաղային թափոնների կառավարման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ կուտակելուց և այդպիսի համակարգերի ստեղծմանն ընթանալու որոշումից հետո՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում 2016 թվականին մշակվեց և նույն թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ Ռազմավարությունը, որը նախատեսում է ԿԿԹԿ հանրապետական համակարգի ստեղծում, և որը ներառելու է միմյանցից անկախ գործող, բայց միևնույն պահանջներին ու սկզբունքներին բավարարող ԿԿԹԿ տարածաշրջանային ենթահամակարգեր, որոնց թվում է նաև Շիրակի մարզում ձևավորվելիք ենթահամակարգը:

10. Ասիական զարգացման բանկի օժանդակությամբ 2013 թվականին եվրոպական փորձագետների կողմից իրականացվել է «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» ուսումնասիրությունը: Ըստ ուսումնասիրության վերաբերյալ պայմանագրային պարտավորության, բանկը պետք է իրականացնե՛ր նաև ՀՀ Շիրակի մարզի ԿԿԹԿ բարելավման տեխնիկատնտեսական հետազոտություն:

11. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ դանիական COWI խորհրդատվական ընկերության կողմից 2015 թվականին իրականացվել է Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման տեխնիկատնտեսական հետազոտությունը:

12. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և «Թրանսփարենսի Ինթերնեյշլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից 2017 թվականին «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Գյումրիում աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկույց» ուսումնասիրությունը:

13. Կարելի է փաստել, որ մինչ այժմ ձեռնարկված քայլերը կամ առաջարկվող լուծումներն ունեցել են հատվածային բնույթ և հիմնականում վերաբերել են աղբը հավաքելուն ու առանց տեսակավորելու և խտացնելու բնակավայրից հեռացնելուն/թաղելուն: Համայնքային, մասնավոր նախաձեռնությունները, միջազգային հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ, վերաբերել են և

վերաբերում են կոշտ կենցաղային թափոնների կառավարման գործընթացի որևէ առանձին բաղադրիչին (պլաստիկ շշերի հավաքում, աղբի վերամշակում, աղբավայրի ստեղծում, և այլն):

14. Առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերել են ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծմանը կամ բարելավմանը՝ առանց ինստիտուցիոնալ կողմին պատշաճ ուշադրություն դարձնելու:

15. Պատշաճ ուշադրություն չի դարձվել պետական և մասնավոր հատվածների համագործակցությանը և ջանքերի համադրմանը:

16. Հատվածային և ոչ լիարժեքորեն համակարգված բնույթ են կրում միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր երկրների (կազմակերպությունների) կողմից տրամադրված աջակցությունները:

17. Անհրաժեշտություն է առաջացել մշակել ՀՀ Շիրակի մարզի համար կոշտ կենցաղային թափոնների կառավարման զարգացման հայեցակարգ, որը կուրվագծի կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառում պետության քաղաքականությունը, նախընտրելի լուծումներն ու ակնկալվող արդյունքները:

V. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ

18. ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմտյան մասում՝ զբաղեցնելով 2681 ք.կմ տարածք: Արևմուտքից և հյուսիսից մարզի սահմանը նույնական է ՀՀ պետական սահմանի հետ՝ համապատասխանաբար Թուրքիայի և Վրաստանի Հանրապետությունների հետ, արևելքից և հարավից մարզը սահմանակից է ՀՀ համապատասխանաբար Լոռու և Արագածոտնի մարզերի հետ: 2011 թվականի մարդահամարի տվյալներով մարզի փաստացի բնակչությունը շուրջ 230.000-ի է հասնում, որի գրեթե կեսը ապրում է մարզկենտրոն Գյումրիում: Շիրակի մարզն ունի 3 քաղաքային և 76 գյուղական համայնքներ:

19. Մարզում գործող կոշտ թափոնների կառավարման համակարգը բավականին պարզ է և հիմնված է տեղական աղբանոցներում թափոնների հավաքման և հեռացման վրա՝ առանց պատշաճ շահագործման կամ բնապահպանական միջոցառումների:

20. Քաղաքային համայնքներում թափոնները հավաքվում են կանոնավոր կերպով, սակայն գյուղական համայնքներում թափոնների հավաքման հաճախականությունը ցածր է, որոշ գյուղերում նույնիսկ տարին մեկ անգամ:

21. Ընդհանուր առմամբ ՀՀ Շիրակի մարզի բնակչության 93.5%-ը ստանում է աղբահանության ծառայություններ: Թեև այդ ցուցանիշը Երևանից (100%) երկրորդն է հանրապետությունում, բայց պայմանավորված է Գյումրիի մեծ տեսակարար կշռով, քանի որ մարզի բնակչության շուրջ 50%-ը բնակվում է Գյումրիում:

22. Մարզի 56 համայնքներում (կամ մարզի 72%-ում) իրականացվում են աղբահանության ծառայություններ: Մարզի 1000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներից աղբահանության ծառայություններ իրականացվում են միայն հինգում:

Փոքր գյուղական համայնքներում ոչ մի ծառայություններ չեն իրականացվում:

23. Աղբահանությունը հիմնականում իրականացվում է հնացած մեքենաներով, նոր մեքենաներով փոխարինելու և սպասարկման համար միջոցների բացակայության պատճառով, ինչպես նաև էժանագին մեքենաներ ձեռք բերելու միտումով, որոնք չեն դիմանում աղբահանմանը:

24. Աղբահանության ծառայությունների դիմաց վարձավճարը մարզում կազմում է 0-ից 400 դրամ: Մարզի որոշ տարածքներում չկա սահմանված վարձավճար և բնակչությունը բոլորովին չի վճարում ծառայությունների դիմաց: Մարզում ամենաբարձր վարձավճարը համայնքի ավագանու որոշմամբ սահմանված է Անիպեմզա համայնքում 400 դրամ, մյուս համայնքներում 50-ից մինչև 300 դրամ:

25. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար մարզի բնակավայրերում կնքվել է թվով 1674 պայմանագիր:

26. Մարզում գործում են աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող 14 մասնավոր ընկերություններ:

27. Քաղաքային համայնքներում (Գյումրի, Արթիկ և Մարալիկ) թափոնների գոյացման միավորը կազմում է 0.6 կգ/անձ/օր, ամենամեծ գյուղական համայնքներում (Ախուրյան և Ազատան)՝ 0.6 կգ/անձ/օր և բոլոր այլ գյուղական համայնքներում՝ 0.4 կգ/անձ/օր:

28. Ընդհանուր առմամբ, փոքր բնակչությամբ գյուղական համայնքներում թափոնների գոյացման միավորը ավելի փոքր է, քան ավելի մեծ բնակչությամբ քաղաքային համայնքներում:

29. ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում աղբահանության ծառայությունների ծախսային և եկամտային վիճակը ներկայացվում է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աղբահանության ծառայությունների ծախսային և եկամտային վիճակը ՀՀ Շիրակի մարզի համայնքներում (2016 թ.)

	Համայնք	Բնակչությունը ըստ ուղղիստրի	Դրույքաչափի	Ֆիզ. անձանցից հավաքագրված գումար (հազ. դրամ)	կատարողական (ֆիզիկական անձանց մատով)	Իրավաբանական անձանցից հավաքագրված գումար (հազ. դրամ)	Աղբահանության վրա ծախսված գումար (հազ. դրամ)	Աղբավայրի սպասարկում (հազ. դրամ)
1	Ազատան	5273	100	2237	35.35%	0	500	300
2	Ախուրիկ	1083	0	0	0.00%	0	1310	0
3	Ախուրյան	9278	100	4878.89	22.82%	2951.2	750	133
4	Այգաբաց	762	300	0	0.00%	0	183	0
5	Առափի	1683	100	0	0.00%	0	3390	387
6	Արևիկ	1800	0	0	0.00%	0	700	0
7	Բենիամին	722	100	247	28.51%	0	700	0
8	Գեղք	571	0	0		0	50	0

9	Գյուճի	160309	100	78141.23	40.62%	81738.79	24548.95	9600
10	Երազգավորս	1523	200	3.7	1.21%	0	2400	0
11	Կամո	1476	0	0	0.00%	0	130	0
12	Կապս	684	0	0	0.00%	0	950	0
13	Կառնուտ	1005	0	0	0.00%	0	300	0
14	Հացիկ	1045	0	0	0.00%	0	250	0
15	Հովիտ	525	240	0	0.00%	0	250	0
16	Ղարիբջանյան	1014	0	0	0.00%	0	300	0
17	Մայիսյան	1625	200	0	0.00%	0	250	0
18	Մարմաշեն	1886	0	0	0.00%	0	2000	0
19	Շիրակ	1130	0	0	0.00%	0	200	0
20	Ոսկեհասկ	2051	100	0	0.00%	0	1084.6	0
21	Ջրառատ	1077	0	0	0.00%	0	300	0
22	Վահրամաբերդ	1434	50	34.6	4.02%	0	1800	0
23	Քեթի	956	100	0	0.00%	0	840	0
24	Անուշավան	2109	0	0	0.00%	0	1500	0
25	Արևշատ	1864	0	0	0.00%	0	950	0
26	Արթիկ	20245	120	5759.246	19.76%	6157.046	17769.491	540.5
27	Գեղանիստ	1234	0	0	0.00%	0	800	0
28	Գետափ	840	0	0	0.00%	0	300	100
29	Լեռնակերտ	1394	0	0	0.00%	0	1800	0
30	Հայրենյաց	747	0	0	0.00%	0	600	0
31	Հառիճ	1174	0	0	0.00%	0	1050	0
32	Հոռոմ	2079	100	0	0.00%	0	156	0
33	Հովտաշեն	344	0	0		0	250	0
34	Մեծ Մանթաշ	2205	100	0	0.00%	0	400	0
35	Մեղրաշեն	1217	0	0	0.00%	0	450	0
36	Նահապետավան	822	0	0	0.00%	0	960	0
37	Նոր կյանք	1547	0	0	0.00%	0	2400	0
38	Պեմզաշեն	3064	80	445.1	15.13%	0	491	0
39	Սարալանջ	1084	200	0	0.00%	0	960	0
40	Սարատակ	1376	0	0	0.00%	0	950	0
41	Սպանդարյան	1601	0	0	0.00%	0	1000	150
42	Վարդաքար	657	0	0	0.00%	0	500	0
43	Փանիկ	2967	100	0	0.00%	0	780	80
44	Փոքր Մանթաշ	2305	100	0	0.00%	0	2	0
45	Անիպեմզա	407	400	0	0.00%	0	200	0
46	Իսահակյան	1018	0	0	0.00%	0	128	0
47	Լանջիկ	930	0	0	0.00%	0	400	0
48	Լուսաբյուր	620	0	0	0.00%	0	100	0
49	Ձորակապ	1226	50	0	0.00%	0	1982	150
50	Մարալիկ	7299	100	450.1	5.14%	500.9	23836.5	1310
51	Շիրակավան	784	0	0	0.00%	0	200	0
52	Սառնաղբյուր	3440	100	0	0.00%	0	190	500
53	Սարակապ	637	0	0	0.00%	0	460	0
54	Քարաբերդ	1127	0	0	0.00%	0	250	0
55	Ամասիա	5574	100	42.1	0.63%	360.1	250	0
56	Աշոց	7667	100	0	0.00%	48	96	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	297663		92239		91759	105347.5	13250.5

30. Մարզի երեք քաղաքային համայնքներն ունեն իրենց աղբանոցները, որոնք գտնվում են իրենց վարչական տարածքների սահմաններում և քաղաքի կենտրոններից կարճ տրանսպորտային հեռավորության վրա են գտնվում:

31. Մարզի գյուղական համայնքներն ունեն ավելի վատ կազմակերպված և հաճախ բազմաթիվ փոքր աղբանոցներ:

32. 2017 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նախաձեռնությամբ հանրապետությունում առկա աղբանոցների գույքագրման և անձնագրավորման արդյունքներով ՀՀ Շիրակի մարզում գույքագրվել է թվով 337 աղբանոց:

33. 2017 թվականի ապրիլ ամսին սկիզբ առած «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում նշված աղբանոցներից արդեն իսկ փակվել են 222-ը և մինչև տարեվերջ նախատեսվում է փակել ևս 28-ը:

34. Պաշտոնապես չկա թափոնների վերամշակում, սակայն որոշ ոչ պաշտոնական տեսակավորում առկա է մարզում: Մասնավորապես աղբանոցների մոտ, որտեղ աղբ հավաքողները տեսակավորում և վաճառում են արժեքավոր վերամշակվողները (մասնավորապես մետաղ, ապակի և պլաստիկներ) մասնավոր ընկերություններին, որոնք հետագայում վաճառում են դրանք վերամշակող գործարաններին:

35. Ըստ ուսումնասիրությունների Գյումրի համայնքի աղբավայրում գործում են վերամշակվող թափոնների հետևյալ գները՝ պլաստիկի համար՝ 60 դրամ/կգ, 50 կգ ապակու համար՝ 700 դրամ:

36. Այնուամենայնիվ, ներկայումս Շիրակի մարզում չկա կայուն տեղական շուկա՝ վերամշակվող նյութերի ավելի մեծ ծավալների համար:

37. Գյումրի քաղաքային համայնքի աղբահանությունը

1) Գյումրիում խառը կենցաղային թափոնները հավաքվում են բնակավայրերից օրը մեկ կամ երկու անգամ (առանց հանգստյան օրերի), իսկ քաղաքի կենտրոնում օրը երեք անգամ: Հավաքման հաճախականությունը կախված է հավաքման շրջանում կոնտեյներների տարողունակությունից: Վտանգավոր թափոնների հավաքման հատուկ համակարգ գոյություն չունի, հետևաբար տնային տնտեսությունների, հաստատությունների և առևտրային կետերի վտանգավոր թափոնները հավաքվում են սովորական կենցաղային թափոնների հետ: Հավաքված թափոնները տեղափոխվում են անմիջապես քաղաքային աղբավայր, որը գտնվում է քաղաքին մոտ:

2) Գործող աղբահանության սխեման իրենից ներկայացնում է քաղաքի ողջ տարածքում կոնտեյներների վրա հիմնված համակարգ՝ 0,7 մ³ պողպատյա կոնտեյներների կիրառմամբ: Կոնտեյներները դատարկվում են կողային բեռնիչով աղբատար մեքենաներով, որոնք հազեցած են կոնտեյներների հիդրավլիկ ամբարձիչով:

3) Ավելի փոքր հավաքման բեռնատարները կիրառվում են թափօփված աղբի հավաքման համար կոնտեյներների շուրջը և քաղաքապետարանի իրավազորության տակ գտնվող այլ տարածքներում:

4) Բացի այդ, քաղաքապետարանը մատուցում է փողոցների մաքրման ծառայություններ: Կոնտեյներները տեղադրված են 270-280 հավաքման կետերում

յուրաքանչյուրում 2-6 կոնտեյներ: Դրանք տեղադրված են ճանապարհի երկայնքով կամ բազմահարկ շենքերի ներսում:

5) Գյումրիում շահագործվում են թափոնների հավաքման 22 բեռնատար մեքենա, որոնցից 12-ը ավելի քան 25 տարի է շահագործվում են: 2012 թվականին ձեռք են բերվել 10 նոր 7խմ ծավալ ունեցող կոմպակտավորող հավաքման բեռնատարներ, սակայն նրանցից շատերը արդեն մաշվածության հետքեր ունեն: Գյումրին ունի իր սեփական ավտոտնակ/արհեստանոցը և 7 աշխատակից իրականացնում են նորոգման և տեխ.սպասարկման աշխատանքներ:

6) Գյումրիում գույքագրվել է թվով 49 աղբանոց: «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում նշված աղբանոցներից արդեն իսկ փակվել են 32-ը և մինչև տարեվերջ նախատեսվում է փակել ևս 17-ը:

7) Աղյուսակ 2-ում արտացոլվում է Գյումրի քաղաքի թափոնների մորֆոլոգիական կազմը:

Աղյուսակ 2. Գյումրի քաղաքի թափոնների կազմությունը

Գյումրի քաղաքի թափոնների կազմությունը 2014 թվականի դրությամբ							
բաղադրիչը	Գյումրի քաղաքի՝ հետազոտության համար ընտրված թաղամասեր						միջին կշռային
	Անի	Բանավան	Մսի կոմբինատ	Պոլիգոն	Կենտրոնական-1	Կենտրոնական-2	
Ընտրված թաղամասերում գոյացվող աղբի տեսակարար կշիռը ամբողջ քաղաքի համար	5%	7%	6%	8%	50%		76%
Աղբի վերցված չափը (կգ)	1.0854	1.319,8	1.179,1	772,2	1.168,6	538,0	6.036,1
առաջնային տեսակավորման մանր ժամանակ հետազոտված աղբի տեսակը	12.5%	10.8%	12.5%	19.1%	11.2%	14.9%	13.4%
Թափոնների մորֆոլոգիական կազմ, առաջնային տեսակավորում							
թուղթ/սովարաթուղթ	2.50%	2.60%	3.30%	3.80%	2.40%	4.40%	3.30%
պլաստիկ	7.60%	5.40%	5.70%	9.10%	5.30%	7.70%	6.70%
մետաղ	1.10%	1.30%	1.40%	3.60%	1.20%	1.30%	1.50%
ապակի	2.90%	2.40%	3.60%	3.90%	3%	3.20%	3.20%
տեքստիլ	1.20%	1.90%	2%	1.50%	1.10%	3.50%	2.10%
ոեզին, կաշի	0.30%	0.20%	0.70%	1.40%	0.30%	0.50%	0.50%
Վտանգավոր թափոններ	1%	0%	0%	0%	0.30%	0%	0.20%
էլեկտրոնային թափոններ	0%	0%	0.20%	0%	0.30%	0%	0.10%
չեզոք աղբ	2%	0.30%	0.20%	2.60%	0.20%	0.70%	0.70%
կենսաքայքայվող աղբ	14.70%	25.50%	20.90%	27.50%	12.30%	17.60%	17.70%
այլ	0%	0%	0%	0%	0%	0%	0%
խառը և չտարբերակվող աղբ	66.80%	60.30%	62%	46.80%	73.60%	61.10%	64.10%
ամբողջը	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Խառը աղբի քայքայում (երկրորդային տեսակավորում)							
աղբի ընտրված չափը (կգ)	67.8	60.7	85.7	51.2	51.3		316.7
թուղթ/սովարաթուղթ	3.70%	5.80%	1.50%	5.90%	6.40%	6.40%	5.70%
պլաստիկ	5.20%	3.30%	4.70%	5.50%	3.50%	3.50%	3.90%
կավ և ապակի	1.50%	5.60%	4.30%	1.20%	1.60%	1.60%	2.10%
մետաղ	0.90%	2.10%	1.10%	2.50%	0.80%	0.80%	1.10%
տեքստիլ	1.80%	1.60%	1.50%	1.90%	1%	1%	1.20%
օրգանական աղբ (մոխիր, հող և այլն)	81%	81.50%	86.90%	83.10%	86.70%	86.70%	85.90%

ամբողջը	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Մաքսիմալ հնարավորը							
թուղթ/սովարաթուղթ	5%	6.10%	4.20%	6.50%	7.10%	8.30%	7%
պլաստիկ	11%	7.40%	8.60%	11.60%	7.90%	9.90%	9.20%
Կենսավերամշակելի մասնաբաժին	69.10%	70.80%	67.60%	61.70%	73.10%	67.80%	69.30%
Հատուկ աղբի մասնաբաժին ¹							
կենդանական աղբ	0%	0.40%	3.40%	0%	0%	0%	0.30%
վտանգավոր աղբ	1%	0%	0%	0%	0.30%	0%	0.20%
սանիտարական աղբ	3.70%	3.50%	3.80%	4.70%	3%	2.70%	3.20%
էլեկտրոնային աղբ	0%	0%	0.20%	0%	0%	0%	0%

38. Արթիկ քաղաքային համայնքի աղբահանությունը

1) Արթիկի համայնքապետարանը կոշտ թափոնների կառավարման ծառայությունները պատվիրակել է մասնավոր ընկերության: Ընկերությունը, ի թիվս այլնի, պատասխանատու է փողոցները ավելու, թափոնները հավաքելու դեպի աղբավայր տեղափոխելու համար Արթիկ համայնքն ունի երկու գործող աղբավայր):

2) Խառը կենցաղային և այլ թափոնները հավաքվում են բնակավայրերի և այլ տարածքներից ամեն օր: Վտանգավոր թափոնների հավաքման հատուկ համակարգ գոյություն չունի, ուստի վտանգավոր թափոնները տնային տնտեսություններից, հաստատություններից և առևտրային կետերից հավաքվում են կենցաղային թափոնների հետ միասին: Հավաքված թափոնները տեղափոխում են անմիջապես քաղաքային աղբանոց:

3) Ներկա աղբահանության սխեման կոնտեյներների վրա հիմնված համակարգ է՝ քաղաքապետարանի բոլոր տարածքներում, որտեղ օգտագործվում են առանց անիվների 1 խոր. մ պողպատյա կոնտեյներներ: Գործում է հավաքման 2 ավտոմեքենա՝ մի բեռնատարը հագեցած է կողային բեռնման համար նախատեսված բարձրացնող հարմարանքով, սակայն առանց կոմպակտավորման հարմարանքի, իսկ մյուսը՝ չունի բարձրացնող հարմարանք, այսպիսով թափոնները կոնտեյներներից ձեռքով են բեռնվում ավտոմեքենայի մեջ:

4) Համաձայն քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ աղբահանման ծառայությունները մատուցվում են տնտեսությունների, հաստատությունների և առևտրային կազմակերպությունների 96%-ին: Յուրաքանչյուր հավաքման բեռնատար ունի իր հավաքման ուղին և հավաքման գրաֆիկը:

¹ Մասնաբաժնում օգտագործվող եզրույթներն ունեն հետևյալ իմաստները՝ կենդանական աղբ՝ կենդանիների գոյատևման արդյունքում առաջացած կենսաբանական աղբ կամ նրանց դիերն ու դրանց մնացորդները, վտանգավոր աղբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վտանգավոր թափոն, սանիտարական աղբ՝ սանիտարական մաքրման աշխատանքների արդյունքում առաջացող աղբ, էլեկտրոնային աղբ՝ շահագործումից դուրս եկած կամ խտանված էլեկտրական սարքեր և դրանց մնացորդներ:

5) Արթիկում գույքագրվել է թվով 29 չգործող աղբանոց: «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում նշված աղբանոցներից արդեն իսկ փակվել են 17-ը և մինչև տարեվերջ նախատեսվում է փակել ևս 6-ը:

6) Առկա համակարգի խնդիրն այն է, որ բաց կոնտեյներներում պահեստավորումը առաջացնում է այնպիսի տհաճություններ, ինչպիսիք են գարշահոտը, միջատները, կրծողները, փողոցային կենդանիները, որոնք կոնտեյներներում սնունդ են փնտրում: Բացի այդ, հավաքված թափոնները անձրևների ժամանակ թրջվում են և ծանրանում: Թափոնները կոնտեյներներից ձեռքով ավտոմեքենայի մեջ բեռնելու համակարգը ընդհանուր առմամբ հակահիգիենիկ է, աշխատատար և ժամանակատար:

39. Մարալիկ քաղաքային համայնքի աղբահանությունը

1) Խառը կենցաղային թափոնները հավաքվում են բնակավայրերի և այլ տարածքներից ամեն օր: Վտանգավոր թափոնների հավաքման հատուկ համակարգ գոյություն չունի, ուստի վտանգավոր թափոնները տնային տնտեսություններից, հաստատություններից և առևտրային կետերից հավաքվում է կենցաղային թափոնների հետ միասին: Հավաքված թափոնները տեղափոխում են անմիջապես քաղաքային աղբանոց: Քաղաքապետարանում չկան հավաքման մասնավոր ընկերություններ:

2) Աղբահանության համակարգը քաղաքի կենտրոնում և քաղաքի կենտրոնից դուրս որոշ ընտրված տարածքներում կոնտեյներների վրա հիմնված համակարգ է, որտեղ կիրառվում են ստանդարտ 0.7լսմ. պողպատյա կոնտեյներներ առանց անիվների: Կոնտեյներները դատարկվում են կողային բեռնիչով կոմպակտավորման ավտոմեքենայով և, երբ հավաքման ավտոմեքենան լցվում է, թափոնները տեղափոխվում են աղբավայր: Բացի այդ, քաղաքապետարանն ունի 50 լիտրանոց բաց մետաղական աղբամաններ, որոնք տեղադրված են այգիներում և գլխավոր փողոցներում: Աղբամանները դատարկվում են փողոցի մաքրման աշխատանքների հետ համատեղ:

3) Համաձայն քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ աղբահանության ծառայությունները մատուցվում են տնտեսությունների, հաստատությունների և առևտրային կազմակերպությունների 50-60%-ին: Հաշվի առնելով այն, որ քաղաքացիները իրենք են բերում թափոնները հավաքման կետեր, քաղաքապետարանը գնահատում է, որ քաղաքացիների մոտ 80-90% օգտվում է աղբահանման համակարգից:

4) Մարալիկում գույքագրվել է 2 աղբանոց: «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում գույքագրված 2 աղբանոցներն էլ փակվել են: Համայնքի աղբահանության համար գործում է 1 աղբանոց քաղաքից 5 կմ հեռավորության վրա:

5) Մարալիկի աղբահանության համակարգում առկա խնդիրները ամբողջովին նույնական են մարզի մնացյալ քաղաքների համապատասխան խնդիրներին:

40. Շիրակի մարզի գյուղական համայնքների աղբահանությունը

1) Շիրակի մարզի գյուղական համայնքներում խորհրդատուների կատարած ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվում են հետևյալ ամփոփումները:

2) Համայնքներից շատերն ունեն աղբահանման որոշ համակարգ և նրանք բոլորն էլ հետաքրքրված են այդ համակարգի բարելավմամբ՝ քաղաքացիներին առավել կազմակերպված հավաքման ծառայություններ մատուցելու հարցում:

3) Ավելի մեծ գյուղական համայնքները կիրառում են կոնտեյներներով հավաքման համակարգը, ինչպես նաև դոնից դուռ հավաքումը: Նրանք ունեն մեկ կամ երկու (հին) հավաքման բեռնատարներ թափոնների հավաքման և հավաքված թափոնների դեպի բաց աղբավայր տեղափոխման համար: Աղբավայրերը գտնվում են համայնքների մոտ:

4) Մյուս գյուղական համայնքներից շատերը ներկայացնում են աղբահանության սահմանափակ համակարգեր, որոնք շատ հաճախ անբավարար են, ունեն հավաքման փոքր ծածկույթ:

5) Մարզի գյուղական բնակավայրերում գույքագրվել է թվով 257 աղբանոց: «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում նշված աղբանոցներից արդեն իսկ փակվել են 171-ը և մինչև տարեվերջ նախատեսվում է փակել ևս 5-ը:

6) Ամենափոքր գյուղերում հիմնականում թափոնների կանոնավոր հավաքման և տեղավորման համակարգ չկա: Բնակիչները սեփական ուժերով տեղավորում են թափոնները իրենց տներից դուրս, տանում են դրանք գյուղերին մոտ բաց աղբանոցներ կամ ուղղակի այրում են:

VI. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

41. Մարզում առկա աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի խնդիրներն են.

1) Աղբահանության ծառայություններում համայնքների ներգրավվածության ցածր մակարդակը, որի հետ մեկտեղ, խիստ անբավարար է նաև մատուցվող ծառայությունների որակը.

2) Աղբահանության համակարգում անբավարար միջոցների ներգրավվածությունից բացի, առկա է նաև աղբահանության սակագների չսահմանվածության, իսկ սահմանված դեպքերում՝ չհավաքագրման կամ հավաքագրման ցածր տոկոս: Այս խնդիրը, սակայն, ունի երկու կողմ:

ա. գումար չի հավաքագրվում, քանի որ համայնքում աղբահանության ծառայություն, որպես այդպիսին չի մատուցվում,

բ. գումարների չհավաքագրումը հանգեցնում է աղբահանության ծառայություն ներդնելու և հետագայում շահագործելու խիստ բարդությունների:

3) Աղբահանության ցածր, տնտեսապես ոչ ծախսածածկող վարձավճարների սահմանումը.

4) Աղբահանության և սանիտարական մաքրման համար տեխնիկապես անհագեցվածությունը, այդ թվում աղբատար մեքենաների և կոյնտեյնների պակասությունը: Բացի այդ համայնքներում կոնտեյներների անբավարար քանակի և հավաքման կետերի բացակայության պատճառով և ոչ սահմանված կարգով ըստ ժամանակացույցի ու սխեմայի թափոնների հավաքումն ու հեռացումը այնպիսի տհաճություններ է պատճառում, ինչպիսիք են գարշահոտը, միջատները, կրծողները, փողոցային կենդանիները: Ավելին, հավաքված թափոնները թրջվում ու ծանրանում են անձրևների ժամանակ:

5) Կուտակված գրեթե բոլոր թափոնները հեռացվում են տեղական աղբանոցներ՝ առանց որևէ բնապահպանական միջոցառումների:

6) Բացակայում է աղբանոցներ առաքվող թափոնների վերահսկողությունն ու տեսակների և քանակի գրանցումը:

7) Քաղաքային համայնքներից ոչ մեկն այսօր չունի աղբավայրերի մոտ տեղակայված կամրջային կշեռք, այսպիսով հավաքված թափոնների մոտավոր քանակը ներկայումս հիմնված է բեռնատարներով աղբանոցներ առաքվող թափոնների ծավալի վրա (Խ.մ-ով), կամ դատարկված կոնտեյներների ծավալի վրա: Խ.մ-ով ծավալը փոխարկվում է տոննայի՝ թափոնների խտության վերաբերյալ ենթադրությունների վրա հիմնվելով (տոննա/Խ.մ): Որոշ քաղաքապետարաններ չեն գրանցում/արձանագրում թափոնները աղբանոց առաքող բեռնարատների և կանոնավոր կերպով դատարկվող կոնտեյներների թիվը:

8) Բոլոր գործող աղբանոցները հեռու են ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխանող աղբավայրերից: Դրանցից ոչ մեկը չունի երեսապատման համակարգ, ֆիլտրատի հավաքում և մշակում, աղբավայրի գազի կուտակում կամ այլ սարքավորումներ և նախագծումներ, որոնք կանխում են շրջակա միջավայրի ախտոտումը: Վերջապես, աղբանոցները պատշաճ կերպով չեն շահագործվում՝ անձնակազմի և սարքավորումների բացակայության պատճառով, իսկ թափոնների հաճախակի այրումը ավելացնում են բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

9) Չի գործում թափոնների առանձնացման որևէ համակարգ, ինչպես նաև վերամշակման համակարգերը բացակայում են:

42. Առաջարկվում է ներդնել մի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովել մարզում բնապահպանական, սոցիալ-տնտեսական առումով արդյունավետ, ինչպես նաև մարդու առողջության, նրա կենսակերպի ու շրջակա միջավայրի վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ՝ թափոնների կանոնավոր հավաքմամբ, հեռացմամբ և թաղմամբ կամ վերամշակմամբ:

VII. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

43. ՀՀ Շիրակի մարզում պատշաճ աղբահանության ծառայություններ մատուցելու նպատակով առաջարկվում է ներդնել մի համակարգ, որի մեջ կներգրավվեն մարզի բոլոր բնակավայրերը:

44. Հիմնվելով մարզում կատարված ուսումնասիրությունների և դրանց արդյունքների վերլուծություններով ստորև թիվ 3 Աղյուսակով ներկայացվող թափոնների գոյացման կանխատեսումների վրա, առաջարկվում է մարզում ներդնել բոլոր համայնքների համար կոնտեյներների վրա հիմնված հավաքման համակարգ և ստեղծել ԵՄ չափանիշներին համապատասխան մեկ տարածաշրջանային աղբավայր:

Աղյուսակ 3. Մարզում գոյացող թափոնների քանակի կանխատեսումներ, տոննա

	2020	2034	2043
ՀՀ Շիրակի մարզ, այդ թվում	47,676	53,722	59,936
Գյումրի	26 600	29,973	33,440
Արթիկ	4219	4,755	5,304
Մարալիկ	1142	1,278	1,436
Գյուղական համայնքներ	15715	17,708	19,756

45. Հաշվի առնելով թափոնների գոյացման ցածր մակարդակը մարզի շատ համայնքներում, ինչպես նաև շատ համայնքների կարողությունները՝ աղբահեռացման բարելավված ծառայություններ կազմակերպելու հարցում, համարվում է տնտեսապես ոչ արդյունավետ յուրաքանչյուր համայնքում հիմնել առանձին աղբահեռացման համակարգ: Մարզում ԿԿԹ միասնական հավաքման համակարգի ներդրման համար առաջարկվում է հետևյալ տարբերակը.

1) Գյումրի քաղաքը կազմակերպում է Գյումրի քաղաքի, Ամասիայի, Աշոցքի և Ախուրյանի տարածաշրջանի բոլոր համայնքների աղբահանությունը:

2) Արթիկ քաղաքը իրականացնում է Արթիկ քաղաքի և Արթիկի համայնքի աղբահանությունը:

3) Մարալիկ քաղաքը կազմակերպում է Մարալիկ համայնքի և Անի համայնքի բոլոր բնակավայրերի աղբահանությունը:

4) Ժամանակակից 1.1խ.մ ծավալով, կափարիչով և անիվներով ստանդարտ պողպատյա կոնտեյներներ կտեղադրվեն հավաքման կետերում քաղաքներում և բնակավայրերում, կամ փոքր բնակելի վայրերում, գլխավոր ճանապարհի մոտ: Հավաքման կետերից յուրաքանչյուրը հագեցած կլինի քաղաքային և մեծ գյուղական համայնքներում՝ 1-4 իսկ մնացած բոլոր գյուղական համայնքներում՝ 1 կոնտեյներով:

5) Վերամշակվող նյութերի հավաքման համար նախատեսվում է կիրառել 2 խմ ծավալով երկու (թղթե և ապակե թափոնների համար) և 4խմ ծավալով երկու

(սովարաթղթի և պլաստիկ շերտի համար) հատուկ նախագծված փակ տարաներ, որոնք միջին հաշվով տեղադրվում են ամեն 1500 բնակչի համար: և սպասարկվում թափոնների հավաքման ծառայությունների կողմից: Տարաները դատարկվում են ըստ լցվածության և պահանջարկի մեկ շաբաթից մինչև մեկամսյա հաճախականությամբ:

6) Թափոնները կհավաքվեն հավաքման կետերից օրական կտրվածքով՝ քաղաքային համայնքներում և Ազատան ու Ախուրյան գյուղական համայնքներում, և շաբաթը երկու անգամ՝ այլ գյուղական համայնքներում: Արդյունքում պետք է ապահովել բավարար թվով կոնտեյներներ, այնպես, միջկոնտեյներային հեռավորությունը չգերազանցի մոտավորապես 100մ՝ բացառությամբ մի քանի ավելի փոքր բնակավայրերի:

7) Ենթադրվում է, որ թափոնների խտությունը 160 կգ/խմ կլինի աղբարկղում և 450 կգ/խմ աղբատար մեքենայում՝ սեղմվելուց հետո:

8) Համայնքներում թափոնների հավաքման ժամանակ բեռնատարի հավաքած միջին արագությունը հավաքման կետերի միջև ենթադրվում է 10կմ/ժամ, 30կմ/ժամ՝ համայնքների միջև և դեպի աղբավայր տեղափոխման ժամանակ և 40կմ/ժամ՝ գյուղական համայնքներում բեռնելուց հետո, որտեղից մինչև Բենիամին ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր համեմատաբար հեռու է:

9) Սարքավորումների գործարկման կյանքը ենթադրվում է 10 տարի տրանսպորտային միջոցների, 5 տարի կոնտեյներների ու 20 տարի՝ հավաքման կետերի համար:

46. Հիմք ընդունելով Շիրակի մարզի ԿԿԹԿ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, այդ թվում գոյացող ու կանխատեսվող թափոնների ծավալը առաջարկվում է ՀՀ Շիրակի մարզում ունենալ մեկ 20 հա տարածքով, 20 տարվա շահագործման ժամկետով ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր:

47. Աղբավայրի տեղադիրքի ընտրությունը կատարվել է մարզի աղբահանության տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության արդյունքներով ութ տարբեր տեղադիրքերի գնահատման և համեմատման միջոցով, որի արդյունքներով Բենիամին համայնքին հարող տարածքը առավել հարմարն է գնահատվել տարածաշրջանում ապագա ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի հիմնման համար:

48. Աղբավայրի համար նախատեսվող տեղանքը գտնվում է Բենիամին համայնքի վարչական տարածքի արևմտյան մասում գտնվող լեռնագագաթի հյուսիսային լանջերի մի շարք հովիտներում, որը հիմնականում արոտավայր է հանդիսանում: Դիտարկվող տարածքը մոտ 50 հա է կազմում, որից 20 հան կարող է ընդգրկվել աղբավայրում:

49. Տարածքի երկրաբանական և աշխարհագրական նկարագիրը համապատասխանում է աղբավայրի կառուցման համար պահանջվող ֆիզիկատեղաբանական չափանիշներին գտնվելու է Գյումրիի հարավային սահմանից

մոտ 8կմ հեռավորության վրա, որին կարելի է մոտենալ մարզի հյուսիսից հարավ ձգվող M1 մայրուղիով:

50. Տարածք տանող երկու մոտեցման ճանապարհները անցնում են գլխավոր ճանապարհի կողքին գտնվող կարևոր հնագիտական գտածոների տարածքով: Շրջակայքում ոչ մի այլ պատմական և մշակութային հուշարձաններ չկան, ինչպես նաև չկան ոչ մի մակերևութային ջրային հոսքեր:

51. Աղբավայրը կազմված կլինի մինչև 3 հա տարածք ունեցող բջիջներից, որոնք իրենցից ներկայացնում են ֆիլտրատների հավաքման ջրհորդաններ, որոնցից ֆիլտրատները հատուկ խողովակներով փոխադրվում են դրանց հավաքման կամերաներ: Բջիջների կառուցումը ուղեկցվում է միատարր կավաշերտի խտացմամբ, բարձր խտության պոլիէթիլենի, գետտեքստիլի և մանրախճի դրենաժային շերտերի տեղակայմամբ:

52. Շահագործման ժամկետի ընթացքում աղբավայրի բջիջներում աղբը պետք է լցվի սահմանված չափանիշներին համաձայն, պարբերաբար տոփանելով և խտացնելով մինչև 1տ/ մ³ խտության և պարբերաբար կավահողով կամ չափանիշներին համապատասխան այլ նյութերով ծածկելով: Լցված բջիջները պետք է ծածկվեն ավելի մեծ հողաշերտով, խտաձածկով և նոր բջիջներ ստեղծվեն:

53. Նպատակահարմար է բջիջներից յուրաքանչյուրի կյանքի տևողությունը սահմանել միջինը 3 տարի:

54. Աղբավայրում պետք է հստակեցվի տեղադրվող աղբի տեսակները, ինչպես նաև անհրաժեշտ է ներդնել մեծածավալ, էլեկտրոնային և վտանգավոր թափոնների հավաքման և դրանց հետագա օգտահանման, վնասագերծման և հեռացման գործընթացները:

55. Քանի որ աղբավայրի շահագործման դադարեցումից հետո մինչև 30 տարի, աղբաջրերի և աղբավայրի գազի պատճառով, դեռևս պահպանվում է շրջակա միջավայրի աղտոտման վտանգը, աղբավայրի կառուցման և շահագործման ծախսերը հաշվարկելիս պետք է հաշվի առնել նաև աղբավայրի հետագա պահպանման և վնասակար ազդեցությունների չեզոքացման ու աղբավայրի փակման ծախսերը:

56. Նոր աղբավայրերի կառուցմանը և շահագործմանը զուգընթաց անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն գործող՝ սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրերի փակման ուղղությամբ՝ ներառյալ աղբավայրերի գույքագրումը, աղբի և մեծածավալ թափոնների մեկանգամյա հեռացումը, համապատասխան լաբորատոր փորձաքննության և դրենաժային միջոցառումների իրականացումը:

57. Նոր տարածաշրջանային աղբավայրի շահագործումը նոր գործունեության է ու այն կարելի է վստահել նաև մասնավոր հատվածի վերահսկողությանը: Մասնավոր հատվածի մասնակցության փորձը Հայաստանում կոշտ թափոնների կառավարման մեջ զարգացման փուլում է:

58. Աղբի վերամշակումն ու օգտահանումը թեև ունի բնապահպանական մեծ նշանակություն և իրականացվում է գրեթե բոլոր առաջադիմական հասարակություններում, սակայն Շիրակի մարզի պարագայում, դրա սոցիալ-տնտեսական և տնտեսագիտական կանխատեսումները չեն հանգեցնում մոտ ապագայում այդպիսի համակարգերի ներդրմանը, եթե չլինեն շահավետ ներդրումային հայտեր: Այս համատեքստում կարևոր կլինի հատկապես քննարկել աղբի վերամշակումը որպես այլընտրանքային էներգիա ստանալու տարբերակ:

59. Այլ հարց է, որ աղբյուրի մոտ աղբի նախնական տեսակավորման իրատեսական հնարավորություններ կան Շիրակի մարզի քաղաքային համայնքներում և երկու ամենամեծ՝ Ազատան և Ախուրյան գյուղական համայնքներում: Այդ դեպքում կենցաղային թափոններում պարունակվող շուկայական արժեք ներկայացնող, վերամշակման ենթակա աղբից օգտակար մնացորդներն օգտահանվում են հենց աղբյուրի (արտադրողի) մոտ:

60. Այստեղ պետք է հիմնական դերակատարում ունենա մասնավոր սեկտորը, որի նախաձեռնությամբ կապահովվի տեսակավորված աղբի հավաքումն ու դրանց վերամշակումը կամ կրկնակի օգտագործումը:

61. Այս դեպքում ներդրողները պետք է պարտավորվեն պատշաճ կերպով իրականացնել իրենց կողմից տեղադրված կոնտեյներների պատշաճ սպասարկումն ու աղբի դատարկումը, այնպես, որ դրանց շահագործումը լրացուցիչ բեռ չհանդիսանա ԿԿԹԿ ենթահամակարգը սպասարկող ընկերության համար:

62. Հաշվի առնելով գյուղերի կենցաղային աղբի բաղադրությունը՝ այնտեղ աղբի նախնական տեսակավորման կոնտեյներների տեղադրում չի նախատեսվում, բացառությամբ Ախուրյանի և Ազատանի:

63. Նախատեսված միջոցառումների իրականացման դեպքում ՀՀ Շիրակի մարզում թափոնների հոսքի կանխատեսումը ներկայացվում է ստորը աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Թափոնների հոսքի կանխատեսումը ՀՀ Շիրակի մարզում

	2020	2024	2034	2043	Ընդհանուր
Գոյացած թափոններ (ընդհանուրը), տոննա	47,676	49,611	54,802	59,936	1,285,975
Սանիտարական աղբավայրում հավաքված թափոններ, տոննա	33,617	44,219	48,776	53,278	1,123,663
Սանիտարական աղբավայրում հավաքված թափոններ, ընդհանուրի %	70.5%	89.1%	89.0%	88.9%	87.4%
Վերամշակման համար հավաքված թափոններ, տոննա	1,507	2,110	3,194	4,344	70,281
Վերամշակման թափոններ, ընդհանուրի %	3.2%	4.3%	5.8%	7.3%	5.5%

VIII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

64. ՀՀ Շիրակի մարզում Եվրոպական չափանիշներին համապատասխան աղբահանության համակարգի ներդրման արդյունքում աղբահանության համակարգում կներգրավվեն մարզի բոլոր բնակավայրերը:

65. Հաշվի առնելով տեղային սոցիալ-տնտեսական, բնակլիմայական, կոմունալ-ենթակառուցվածքները՝ մարզի ԿԿԹԿ համակարգերի ներդրումն առավել սահուն և շահագործումն առավել արդյունավետ կկազմակերպվի:

66. Բնակչության համակ կապահովվի հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ և աղբահանության ու սանիտարական մաքրման ծառայությունների իրականացումը կկրի պարտադիր և պարբերական բնույթ:

IX. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

67. Հայեցակարգի իրականործման արդյունքում.

1) ՀՀ Շիրակի մարզի ամբողջ տարածքը կսպասարկի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի Խորհրդի 2008 թ. նոյեմբերի 19-ի թիվ 2008/98/EC, 1994 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 94/62/EC և Խորհրդի 1999թ. ապրիլի 26-ի թիվ 1999/31 հրահանգների (դիրեկտիվների) պահանջներին (այսուհետ միասին՝ ԵՄ չափանիշներին) բավարարող ԿԿԹԿ համակարգ, որը կներառի աղբահանությունը և աղբավայրերի շահագործումը:

2) Շիրակի մարզի ԿԿԹԿ ենթահամակարգը կենթադրի ոչ ավելի քան 1 տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան ԵՄ չափորոշիչներին համապատասխանող աղբավայրի շահագործում և ենթահամակարգի համայնքներում աղբահանության իրականացում: Արդյունքում այն կսպասարկի Շիրակի մարզի տարածքի 100%:

3) Կհավաքվի Շիրակի մարզում գոյացող (գններացվող) աղբի առնվազն 95%:

4) Նոր համակարգի ներդրմանը զուգընթաց կփակվեն Շիրակի մարզի տարածքում գործող աղբավայրերը:

5) Մասշտաբի էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը: Հայեցակարգի իրականացումը չի պահանջի ՀՀ օրենսդրությամբ սահմանված աղբահանության վճարի առավելագույն դրույքաչափի փոփոխություն:

6) Մասշտաբի էֆեկտի շնորհիվ նաև կմեծանա համակարգի գրավչությունը մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար՝ աղբահավաքման արժեչղթայի յուրաքանչյուր օղակում (աղբահանությունից մինչև աղբավայրի շահագործում կամ աղբի վերամշակում):

7) Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը: Աղբից մաքրված լանդշաֆտը կբարձրացնի Շիրակի մարզի գրոսաշրջային գրավչությունը:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

68. ՀՀ Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգի ֆինանսական գնահատական հնարավոր է տալ հայեցակարգից բխող միջոտումների իրականացման շրջանակներում մշակվող ծրագրերի հստակ գնահատականների արդյունքներով:

69. Սույն հայեցակարգի իրականացման ֆինանսավորման աղբյուրները կարող են լինել՝

- 1) միջազգային և դոնոր կազմակերպությունների ներդրումները.
- 2) վարկային ռեսուրսները.
- 3) մասնավոր հատվածի ներդրումները.
- 4) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները՝ համաֆինանսավորմամբ.
- 5) պետական բյուջեն՝ համաֆինանսավորմամբ.
- 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

XI. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

70. Հայեցակարգի ընդունումը Էապես կնպաստի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի կայացման աշխատանքներին: Այն կաորող է հիմնադրույթային փաստաթուղթ ծառայել գործադիր իշխանության տարածքային ստորաբաժանումների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ Շիրակի մարզի աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրների վերջնական և ոլորտի ժամանակավոր կարգավորման համար:

71. Համերաշխ լինելով ՀՀ 2017-2036 թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը և Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ ու դանիական COWI խորհրդատվական ընկերության կողմից կազմված Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման տեխնիկատնտեսական ուսումնասիրությանը, սույն հայեցակարգը Շիրակի մարզի համար առաջարկում է սպեցիֆիկ լուծումներ՝ հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական, բնապահպանական, կոմունալ-ենթակառուցվածքային խնդիրներն ու ժողովրդագրական պատկերը: